

**ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԱՇԽԱՏՈՂ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԱՆՁՆԱՅԻՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Համիդեհ ՄՈՀԵՐԲԻ**

ԵՊՀ Ընդհանուր հոգեբանության ամբիոն

Բանալի բառեր. կրթական համակարգ, ղեկավար, անձնային  
առանձնահատկություններ

Ժամանակակից հասարակությանը բնորոշ սոցիալ-տնտեսական փոփոխությունների ազդեցությունից անմասն չի մնում նաև կրթական համակարգը: Ներկայումս գիտնականների հետաքրքրության կենտրոնում են այնպիսի հարցեր, ինչպիսիք են կրթական ծրագրերի արդիականացման և այժմեականացման հիմնահարցերը, ինչպես նաև կրթական համակարգի արդյունավետ կառավարման առանձնահատկությունները, որոնք կապահովեն կրթական օջախի կայուն գործառնությունը և բնականոն զարգացումը<sup>1</sup>: Ընդ որում, կրթական համակարգի վերածնակվորման արդյունավետությունը մեծավ մասամբ պայմանավորված է տվյալ կազմակերպության ղեկավարի մասնագիտական և անձնային որակներով:

Հայտնի է, որ կառավարչական գործունեությունը վերաբերվում է մասնագիտական գործունեության այն տեսակներին, որոնք ունեն սոցիալական և մշակութային պայմանավորվածություն<sup>2</sup>: Միևնույն ժամանակ կառավարման յուրահատկությունը պայմանավորվում է անձնային առանձնահատկություններով, որտեղ կարևոր դեր են խաղում կառավարման ոճերը, հուզական և ճանաչողական առանձնահատկությունները, արժեքային կողմնորոշումները, այսինքն այն ամենը, ինչը դարձնում է յուրաքանչյուր ղեկավարի աշխատանքը յուրօրինակ և ինքնատիպ:

Ժամանակակից հետազոտություններում նշվում է, որ ղեկավարի անձնային առանձնահատկությունները կանխորոշում են կառավարման որոշակի ոճի ձևավորումը<sup>3</sup>: Մյուս կողմից, այդ իսկ գործունեության մեջ արդիականանում են անձի այն հատկությունները, որոնք առավելապես են ներգրավված լինում աշխատանքի մեջ: Նշված այս դինամիկ փոփոխությունները իրենց հերթին անդրադառնում են գործունեության որակի և ձևի վրա:

<sup>1</sup> Manasserian T., Science Duty On Companies, 2006, Lragir, available at:  
<http://www.armenianclub.com/2006/04/26/science-duty-on-companies/>

<sup>2</sup> Hoy W. K., Miskel C. G.. Educational administration: Theory, research, and practice, 2013, 9th edition. New York: McGraw-Hill.

<sup>3</sup> Ibukun W.O., Oyewole B. K., Olabode T. Abe. Personality characteristics and principal leadership effectiveness in Ekiti state, Nigeria, International Journal of Leadership Studies, 2011, Vol. 6, Issue 2.

Կարելի է ասել, որ գործունեության ընթացքում են ձևավորվում մասնագիտական կարևոր հատկությունները հիմնվելով անձի կառուցվածքի և պոտենցիալի վրա: Հաշվի առնելով վերոնշյալը, մենք նպատակադրվեցինք ուսումնասիրել, կրթական համակարգում աշխատող ղեկավարների անձնային առանձնահատկությունների արտահայտվածության որակական և քանակական ցուցանիշները, որոնք կանխորոշում են կառավարման որոշակի ոճի ձևավորումը:

Հետազոտությանը մասնակցել են պատահականության սկզբունքով ընտրված Իրանի դպրոցների 60 տնօրեններ կամ այլ ղեկավար պաշտոններ զբաղեցնող անձիք: Կառավարիչների անձնային առանձնահատկությունների ախտորոշման համար կիրառել ենք NEO անձնային հարցարանը, որը թույլ է տալիս բացի անձնային առանձնահատկությունների ախտորոշումից, բացահայտել նաև կառավարման ոճերի առանձնահատկությունները՝ տարբեր անձնային հատկությունների համադրության արդյունքում:

NEO անձնային հարցարանի արդյունքների որակական վերլուծության արդյունքների հիման վրա ղեկավարների ընտրանքը բաժանել ենք 3 ենթախմբերի ըստ կառավարման ոճերի արտահայտվածության աստիճանի՝ 1-ին խմբի մեջ ներառել ենք այն ղեկավարներին, ովքեր հակված են կառավարման ավտորիտար ոճի ցուցաբերմանը: 2-րդ խմբի մեջ ընդգրկել ենք՝ դեմոկրատ ոճին հակված անձանց և 3-րդ խումբը կազմել են կառավարման լիբերալ ոճին հակված ղեկավարները: Ղեկավարների ընտրանքի բաժանումը 3 ենթախմբերի պայմանավորված էր տարբեր անձնային առանձնահատկությունների դրսևորվածության աստիճանով և դրանց համակցությամբ:

Վերոնշյալ ենթախմբերում իրականացվել է անձնային առանձնահատկությունների դրսևորվածության մակարդակի ախտորոշումը ըստ NEO անձնային հարցարանի: Համեմատական վերլուծության արդյունքները ցույց են տվել, որ դեմոկրատ ոճ ցուցաբերող ղեկավարների մոտ գրանցվել են էքստրավերտություն, կապվածություն և կայտառություն գործոնների և դրանց բաղադրիչների արտահայտվածության միջին մակարդակի ցուցանիշներ: “Հսկողություն” երկրորդային գործոնի և դրա բաղադրիչների արտահայտվածության մակարդակը գտնվում է բարձր արժեքների տիրույթում: Դրա հետ մեկտեղ, “Հուզականություն” գործոնը և դրա բաղադրիչները գտնվում են ցածր և միջին արժեքների տիրույթում: Ստացված արդյունքները, բնութագրում են այս խմբի ղեկավարներին, որպես շփումներում բավարար ակտիվություն և արտահայտված լիդերություն ցուցաբերող, կանոնակարգված, պատասխանատու, նորարական մտածողություն և բարձր կամային որակներ ունեցող անձանց, որոնք հակված են մրցակցության և որոշակի անտարբերության:

NEO հարցարանի արդյունքների հիման վրա հայտնաբերված կառավարման ավտորիտար ոճին հակված ղեկավարների խումբը ընդգրկել է 33 հոգի: Նրանց բնութագրական են հետևյալ առանձնահատկությունները. էքստրավերտություն գործոնի արտահայտվածության արժեքները գտնվում են միջին մակարդակի սահմաններում, սակայն դրա բաղադրության մեջ մտնող ակտիվության և դոմինանտության արտահայտվածության արժեքները զրտնրվում են բարձր արժեքների տիրույթում: Ըստ կապվածություն, կայտառություն և հսկողություն գործոնների և դրանց բաղադրիչների ավտորիտար ոճին հակված ղեկավարների մոտ գրանցվել են բարձր մակարդակի արժեքներ, բացառությամբ վստահության գործոնի, որի արժեքները գտնվում են միջինից ցածր մակարդակի տիրույթում: Ըստ հուզականության և դրա բաղադրիչների ավտորիտար ոճին հակված ղեկավարների մոտ գրանցվել են միջին մակարդակի ցուցանիշներ: Նման բնութագրերով ղեկավարները ցուցաբերում են իրենց որպես ինքնաբավ, հուզականորեն կայուն անձիք:

Ստացված արդյունքները բնութագրում են ավտորիտար ոճին հակված ղեկավարներին որպես ակտիվ, դոմինանտ, քիչ շփվող, միևնույն ժամանակ կանոնակարգված, կազմակերպված և հուզականորեն կայուն:

Կառավարման լիբերալ ոճին հակված ղեկավարների թիվը կազմում էր 6 հոգի, որոնք տարբերվում էին մնացած երկու ոճերին հակված ղեկավարներից նախ և առաջ մարդկանց նկատմամբ ջերմության և համագործակցության բարձր մակարդակով, ինչպես նաև շփվողականությամբ, ակտիվությամբ, մարդկային էությունը գնահատելու ունակությամբ: Ըստ ստացված ցուցանիշների կարելի է եզրակացնել, որ լիբերալ ոճին հակված ղեկավարներին հատուկ է լիդերություն առանց ինքնադրսևորման պահանջի, հաշվի առնելով այն, որ նրանք ակտիվ են և միևնույն ժամանակ ուշադրության գրավումը նրանց մոտ գտնվում է միջինից ցածր մակարդակի տիրույթում: Հայտնաբերվել է նաև, որ արտիստիկությունը, երազկոտությունը և զգացմունքայնությունը գտնվում են միջինից բարձր մակարդակի վրա, այն դեպքում երբ հետաքրքրասիրությունը և ձկունությունը միջին մակարդակի տիրույթում: Այսպիսով, լիբերալ ոճին հակված ղեկավարները բնութագրվում են արտահայտված արտիստիզմով, վառ երևակայությամբ, որը նպաստում է զգացմունքները դրսևորելուն, ջերմության, մարդկանց հետ համագործակցելու և մարդկային էությունը գնահատելու ունակությունների զարգացմանը:

### **Համիդեհ ՍՈՇԵՐԻ**

#### **Կրթական համակարգում աշխատող ղեկավարների անձնային առանձնահատկությունները**

*Բանալի բառեր.* կրթական համակարգ, ղեկավարներ, կառավարման ոճ, անձնային առանձնահատկություններ

Ուսումնասիրված է կրթական համակարգում աշխատող ղեկավարների անձնային առանձնահատկությունները, որոնք հիմք են հանդիսանում որոշակի կառավարման ոճի ձևավորման համար: Հայտնաբերված է, որ ավտորիտար ոճով ղեկավարներին բնութագրական են բարձր պատասխանատվությունը, հստակությունը, կասկածամտությունը, ինքնաբավությունը և հուզական կայունությունը: Դեմոկրատական ոճով ղեկավարներին հատուկ են շփվողականությունը, ակտիվությունը, կանոնակարգվածությունը և նորարական մտածողությունը: Լիբերալ ոճով ղեկավարներին բնութագրական են արտիստիկությունը, ակտիվությունը, զգացմունքայնությունը և ինքնադրսևորման պահանջի ցածր մակարդակը:

### **Хамид МОХЕБИ**

#### **Личностные особенности руководителей образовательной среды**

*Ключевые слова:* образовательная среда, руководители, стиль управления, личностные особенности

Изучены личностные особенности руководителей образовательной среды, которые лежат в основе формирования стилей управления. Выявлено, что руководителей с авторитарным стилем управления характеризует высокий уровень ответственности, подозрительность, самодостаточность и эмоциональная стабильность. Руководители с демократическим стилем управления характеризуются общительностью, активность, порядочность инновационное мышление. Руководителям с либеральным стилем управления характерны артистичность, чувствительность, активность, а также низкий уровень потребности в самопроявлении.

### **Hamid MOHEBI**

#### **The personal features of managers of educational system**

*Key words:* educational system, managers, management style, personal features

The personal features of educational system 'managers was investigated. It was found out, that, the educational system' managers with authoritarian style of management were characterized by high level of responsibility, emotional stability, suspicion, self-sufficiency. The managers with democratic management' style were characterized by sociability, activity, decency, innovative thinking. Leaders with a liberal management style are characterized by artistry, sensitivity, activity, and also a low level of the need for self-manifestation.